ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ Նորամարգի Ա. Քաղեշյանի անվան միջնակարգ դպրոցի <<Հասարակագիտություն>>առարկայի /12 դասաժամ/, <<Մաթեմատիկա>> առարկայի/27 դասաժամ/, <<Հայոց լեզու և գրականություն>>առարկայի/17 դասաժամ/, <<Ֆիզիկա>> առարկայի/22 դասաժամ/, <<Ֆիզկուլտուրա>> առարկայի /23 դասաժամ/,<<ՆԶՊ>> առարկայի /7 դասաժամ/,<<Տեխնոլոգիա>> առարկայի /4 դասաժամ/,<<Երգ>> առարկայի/15 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի։

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև1)

2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ։

3. Անձնագրի պատճենը

4. Ինքնակենսագրություն(Ձև5)

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին ու աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)

6. Մեկ լուսանկար ՝ 3×4 չափի

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ։

9.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/։

10.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ։

Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 26_ի N 596 որոշմամբ սահմանված կարգին համապատասխան հայտարարությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած տեղեկություն/մասնակցած լինելու դեպքում/։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում է։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,ապա մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Մրցույթը տեղի կունենա 2025թ. հոկտեմբերի 03-ին՝ ժամը 14:00, Նորամարգի Ա. Քաղեշյանի անվան միջնակարգ դպրոցում։

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 30.09.2025թ. ներառյալ, ամեն օր՝ ժամը 09.00-ից մինչև 15.00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։